

Հաստատում եմ

դպրոցի տնօրեն

Փոխտնօրեն



Ա. Սարգսյան

Ա. Կիրակոսյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
2020-21 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՍՂԵՎ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

1. Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը/

Դասարանը բաղկացած է 20 աշակերտից/13 տղա, 7 աղջիկ/: Աշխույժ են, ակտիվ: Տղաները կարծես թե ավելի սովորող են, պրպտող: Արդեն նկատելի են լիդերներ, ինչպես միջանձնային հարաբերություններում, այնպես էլ առաջադիմության մեջ: Դասարանում կան տարբեր նախասիրություններ ունեցող, գեղարվեստական և մարզական խմբակներ հաճախող աշակերտներ: Տարրական դպրոցից միջին դպրոց են անցել, բայց դեռ հարմարվելու փուլում են: Դասարանում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում՝

- ✓ Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն:
- ✓ Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում, կարգավորում:
- ✓ Դասարանական կոլեկտիվի կենսագործունեության փուլերի/ կիսամյակ/ և միջոցառումների պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն (դասողեկական ժամեր, տեղեկատվական ձեպագրույցներ, ստեղծագործական միջոցառումներ և այլն):
- ✓ Սովորողի սոցիալական պաշտպանություն՝
 - Ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին,
 - ծանոթացում սովորողների ընտանիքի կազմին,
 - նրանց բնակարանային և կենցաղային պայմաններին,
 - բարոյահոգեբանական պայմաններին:
 - Դասարանի աշակերտների սննդի կազմակերպում (նյութական օգնության կազմակերպում):
- ✓ Աշխատանք սովորողների ծնողների հետ՝
 - երեխայի առաջադիմությանը հետևելու կոչ ծնողներին,
 - ծնողների հետ անհատական զրույցների անցկացում,
 - ծնողական ժողովների կազմակերպում:
- ✓ Մանկավարժական աջակցություն աշակերտական ինքնավարության դասարանական մարմնին:
- ✓ Դասամատյանի, աշակերտական օրագրի և այլ փաստաթղթերի վարում/էլեկտրոնային/:
- ✓ աշակերտների հաճախելիություն (մատյանում նշում է բացակայությունները, հետևում է, որ դրանց համար փաստաթուղթ ներկայացվի):
- ✓ առարկայական ուսուցիչների հետ աշխատանք՝ առաջադիմության բարձրացման ուղղությամբ
- ✓ հետևում է աշակերտների կարգապահությանը,
- ✓ Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում
- ✓ դասարանական ժողովների անցկացում,
- ✓ այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ:
- ✓ Սովորողների հանրօգուտ աշխատանքի (դպրոցամերձ տարածքի մաքրում և այլն) կազմակերպում:

Հ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման Ժամկետը
ՄԵՊՏԵՄԲԵՐ		
1	Դպրոց հաճախելու կանոններ. հակահամաճարակային իրավիճակից ելնելով՝ սովորողների իրավունքներն ու պարտականությունները:	11.09.2020թ.
2	Անկախությունը մեծագույն արժեք և նվաճում. ՀՀ պետական խորհրդանիշները /գրույցի անցկացում/:	18.09.2020թ.
3	Դասարանական աշակերտական խորհրդի ընտրություն	25.09.2020թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐ		
1	Աշակերտական ինքնավարության օր՝ ուսուցիչի դերում այսօր ես եմ:	05.10.2020թ.
2	Հայ կինոդերասան Արմեն Զիգարխանյանի ծննդյան 85-ամյակի առթիվ նրա մասին հաղորդման դիտում և խաղացած դերերի մասին գրույց:	09.10.2020թ.
3	Անրի Վերնոյի 100-րդ հորեյանի առթիվ նրա «Մայրիկ» ֆիլմի դիտում:	15.10.2020թ.
4	Աթաբեկ Խնկոյանի 150-ամյակի նախօրեին կարդանք ու վերհիշենք մեծ առակագրի գործերը:	16.10.2020թ.
ՆՈՅԵՄԲԵՐ		
1	Խառնվածքի տիպերը՝ ես իմ ընկերոջ աչքերով:	20.11.2020թ.
2	Քաղաքավարություն ամեն օր/սովորում ենք քաղաքավարության կանոններ/ միասին կազմում ենք մեր դասարանի կանոնները:	27.11.2020թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐ		
1.	Ռ.Հախվերդյանի ծննդյան 70-ամյակի առթիվ երգահան մանկական երգերի ունկնդրում:	04.12.2020թ.
2	Սպիտակի աղետալի երկրաշարժից տարիներ անց. որքանով ենք մենք պատրաստ բնական և տեխնաձին աղետներին:	11.12.2020թ.
3	Իմ նախասիրությունները/գրույցի անցկացում/	18.12.2020թ.
4	«Տարեմուտի խոհեր» ամանորյա միջոցառման նախապատրաստում և անցկացում	25.12.2020թ.
ՀՈՒՆՎԱՐ		
1	Էթիկա և էսթետիկա/լինենք ավելի բարեկիրթ ու էսթետ/	15.01.2021թ.
2	Առնո Բաբաջանյան-100. Երաժշտության ուժը	22.01.2021թ.
3	Հայոց բանակը 29 տարեկան է	29.01.2021թ.
ՓԵՏՐՎԱՐ		
1	Գիտելիքը ուժ է... Իմ գրքերը	05.02.2021թ.
2	«Տյառնընդառաջ» համադպրոցական միջոցառման նախապատրաստում	12.02.2021թ.
3	Մեդիագրագիտություն/պաշտպանություն և անվտանգություն, համակարգչային խաղերի բացասական հետևանքները վարքի վրա/	19.02.2021թ.
4	Անձնական հիգիենա և առողջ սնունդ.ինչո՞ւ է այն կարևոր հատկապես այս տարիքում	26.02.2021թ.
ՄԱՐՏ		
1	Սպարապետ Վ.Սարգսյանի ծննդյան օրվան նվիրված գրույց, նրա մասին պատմող ֆիլմի դիտում	05.03.2021թ.

2	Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում	12.03.2021թ.
3	Մրցույթ-վիկտորինա «Մեր դասարանի էրուդիտը»	19.03.2021թ.
4	«Այս հացը սուրբ» միջոցառում	26.03.2021թ.
ԱՊՐԻԼ		
1	Կատակում ենք միասին. Հումորը մեր կյանքի անբաժան մասն	02.04.2021թ.
2	Ամենման տոն, Մայրության և գեղեցկության տոնի առթիվ անակնկալ մայրերին	09.04.2021թ.
3	Բացահայտում եմ աշխարհը/էքսկուրսիա «Փոքրիկ Էնշտեյն գիտության թանգարան», և Հովհ.Թումանյանի տուն-թանգարան	16.04.2021թ.
4	Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվա միջոցառում	23.04.2021թ.
ՄԱՅԻՍ		
1	«Բախտավորությունն այն է կյանքում, որ ձեռքեր ունես կառուցելու...» Աշխատավորների միջազգային օրվա առաջացումը	01.05.2021թ.
2	Մայիսը հաղթանակների ամիս. շարային ստուգատես, միջոցառում	07.05.2021թ.
3	Իմ վախերը/Ֆոբիաներ/ և դրանց հաղթահարման հնարներ/ զրույց հոգեբանի հետ/	14.05.2021թ.
4	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	28.05.2021թ.
ՀՈՒՆԻՍ		
1	Երեխաների պաշտպանության միջազգային օր	01.06.2021թ.
2	Ամառային արձակուրդին երեխաների հանգստի և ժամանցի ճիշտ տնօրինում	04.06.2021թ.